



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ» ԱՌԻԹՈՎ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԵՌՈՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հովանաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, եւ կազմակերպութեամբ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան Կեդրոնական Մարմինին, 13-15 Մարտ 2009-ին՝ եռօրեայ հոգեւոր մտամփոփման համագումար մը տեղի ունեցաւ Զ.Ե.Դ. ճամբարին մէջ, Պիկ Փայլ:

Այս համագումարը կ'իյնայ այն ծիրէն ներս, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը 2009 տարին հռչակած է «Երիտասարդութեան Տարի»:
Համագումարի թեման էր՝ «Հոգեւոր Արթնութիւն: Մեր երիտասարդութիւնը մեր ապագան է. մասնակցէ՛ Եկեղեցւոյ կեանքին»:

Համագումարին մասնակցեցան Արեւմտեան Թեմի եկեղեցիներու երիտասարդաց խմբակներէն 50 երիտասարդ-երիտասարդուհիներ, գլխաւորութեամբ Զրիստոսնեական Դաստիարակութեան Գրասենեակի վարիչներէն՝ Զոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի:

Ուրբաթ գիշեր, բանակավայր հասնելէ ետք, բնութեան խաղաղութեան մէջ, առաջնորդութեամբ Հայր Սուրբին ու սարկաւագներուն, երիտասարդները հաւատքով եւ երկիւղածութեամբ մասնակցեցան մեր Հայրապետներու կարգած հաղաղական ու Հանգստեան Ժամերգութեանց, միասնաբար աղօթքները, յատկապէս՝ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի գրած «Հաւատով Խոստովանիմ»ը ընթացելով ե՛լ հայերէնով, ե՛լ անգլերէնով: Երկլեզու Ժամագիրքը իւրաքանչիւր երիտասարդի նուիրուած էր Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ, սոյն համագումարին իրենց մասնակցութեան առ ի գնահատանք:

Շաբաթ առաւօտեան կանուխ, երիտասարդները լեռնազնացութիւն կազմակերպած էին: Ճանապարհին, ամբողջ ընթացքին՝ շարականներ ու հոգեւոր երգեր երգուեցան եւ Սաղմոսներ արտասանուեցան: Հակառակ խիստ ցուրտ օդին, բոլորին սրտերն ու հոգիները ջերմ էին՝ առաւօտեան արշալոյսը դիմաւորելու տենչով:

Նախաճաշէն ետք, համագումարը բացուեցաւ աղօթքով: Երիտասարդաց Յանձնախումբի ատենապետ՝ Րաֆֆի Նալճեան, բոլոր երիտասարդներու հոգիները մթնոլորտի մէջ դրաւ, թէ ինչպէ՛ս անոնք կրնան մեղքէ մաքրուիլ եւ իրենց անձերը նուիրել Յիսուս Զրիստոսի՝ ապրելով Զրիստոսնեակայել կեանք մը: Ապա Հայր Սուրբը այս թեման զարգացուց ու

խորացուց, թե ինչպես մեղքը արգելք կ'ըլլայ մարդուն, որպեսզի համարձակ կանգնի Աստուծոյ դիմաց, եւ նաեւ՝ թե ինչպես արգելք կ'ըլլայ որ մենք մեր կեանքին մէջ չկարենանք լսել Աստուծոյ քաղցր ձայնը ու ետ դարձի Աստուծոյ կատարած հրաւերն ու կոչը: Զայր Սուրբը իր դասախօսութեան համար Աստուածաշունչէն մէջբերեց բազմաթիւ համարներ, զորս ընթերցեցին երիտասարդները իրենք: Ապա տեղի ունեցաւ հարց-պատասխան:

Երիտասարդներուն համար մեծ ուրախութիւն եւ քաջալերանք եղաւ Առաջնորդ Սրբազան Զոր այցելութիւնը, ընկերակցութեամբ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեանին: Սրբազան Զայրը ամէն բանէ առաջ գնահատեց երիտասարդներուն լուրջ մասնակցութիւնը համագումարին: Ապա շեշտեց հոգեւոր կեանքի կարեւորութիւնը երիտասարդներու կեանքէն ներս, գիտակից մտքով եւ մաքրուած հոգիով Աստուծոյ մօտենալու եւ իրենց շրջապատին մէջ լուսատու ջահ դառնալու: Ան յիշեցուց նաեւ, թէ Վեհափառ Զայրապետը այս տարին հռչակած է «Երիտասարդութեան Տարի», կոչ ուղղելով բոլորին առաւել՝ եւս մասնակցելու մեր Եկեղեցւոյ կեանքի գանազան երեսներուն:

Սրբազան Զայրը օրհնեց կեսօրուան ճաշը եւ երիտասարդներուն հետ սիրոյ սեղանին մասնակցեցաւ, որմէ ետք անոնց հետ շրջագայեցաւ բանակավայրը եւ ակարտին յիշատակի նկար առաւ համագումարին մասնակիցներուն հետ:

Յետ միջօրէին տեղի ունեցաւ երկրորդ դասախօսութիւնը: Զայր Սուրբը բացատրեց, թե ինչպէ՞ս կարելի է ձերբազատիլ մեղք գործելէ եւ ապրիլ մաքուր կեանք մը: Այս թեմային մասին անդրադառնալով Զայր Սուրբը, Աստուածաշնչական մէջբերումներ կատարելով, կարեւորութեամբ խօսեցաւ ապաշխարութեան մասին, շեշտելով յատկապէս անդրադարձումի, զոջումի եւ խոստովանանքի կարեւորութիւնը՝ մաքուր կեանքի մը գրաւական որպէս, շեշտելով նաեւ Աստուծոյ անբաւ ողորմութիւնն ու սերը մեղաւորին հանդէպ եւ Աստուծոյ պատրաստակամութիւնը զոջացող մեղաւորին ներելու եւ անոր մեղքը յաւիտեանս չյիշելու: «Աստուած մեղքը կ'ատէ, բայց մեղաւորին՝ կը գթայ ու կ'ողորմի» ըսաւ Զայր Սուրբը, հրաւիրելով երիտասարդները ամբողջապէս վստահելու եւ հաւատալու Աստուծոյ ողորմութեան եւ սիրոյն: Դասախօսութենէն ետք տեղի ունեցաւ հարց-պատասխան:

Երեկոյեան տեղի ունեցաւ աղօթքի յատուկ պահ: Իւրաքանչիւր երիտասարդ իր աղօթքներու խնդրանքը գրաւոր ներկայացուց, որոնց ընթերցումէն ետք տեղի ունեցաւ հաւաքական աղօթք, եւ ակարտին, բոլորը միասին ծունկի եկած, երգեցին «Տէր ողորմեա»ն, խաղաղութիւն խնդրելով ամբողջ աշխարհին, իրենց հոգիներուն եւ համայն մարդկութեան:

Կիրակի առաւօտ անգամ մը եւս լեռնագնացութիւն տեղի ունեցաւ: Ապա կատարուեցաւ Արեւագալի ժամերգութիւն, որուն մեծ ուրախութեամբ մասնակցեցան բոլոր երիտասարդները՝ շարականներու երգեցողութիւնը կատարելով եւ աղօթքները միասնաբար ընթերցելով: Նախաճաշէն ետք իւրաքանչիւր երիտասարդ խօսք առնելով փոխանցեց իր սրտի անկեղծ զգացումները ապրած հոգեւոր փորձառութեան մասին, բոլորն ալ շեշտելով այն հանգամանքը՝ թէ իրենց հետ կը տանին հոգեւոր կեանքի մը

քաղցրութիւնը, Հօր Աստուծոյ ընծեաճ խաղաղութիւնը, Զրիստոսի անբաւ սերը եւ Սուրբ Հոգւոյ պարգեւաճ լուսաւորութիւնն ու մխիթարութիւնը:

Ներկայ մը

ACYA FIRST ANNUAL SPIRITUAL REVIVAL AND AWAKENING RETREAT

The Armenian Church Youth Association, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, held its first ever “Spiritual Revival & Awakening” camping retreat at the AYF Camp.

The event brought young, faithful Armenians from the local churches of the Western Prelacy together during the weekend of March 13, 2009. With the guidance of Very Rev. Fr. Barthev Gulumian, and dedicated members of the ACYA executive committee, fifty young Armenians came together from March 13th through the 15th at AYF Camp for prayer services, worship, testimonials, and educational and enlightening lectures.

The retreat began on Friday evening with prayer service led by Fr. Barthev and four deacons from local churches, in which all the youth participated. The service was highlighted with a group reading of “I Confess in Faith” by St. Nerses the Graceful. Prior to the service, all members were presented with copies of prayer service books, a gift from the Prelate.

Day two of the seminar began with a morning hike, culminating in prayer and spiritual songs being sung on a snowy mountaintop. The seminar officially began with opening prayers and remarks by ACYA Chairman Raffi Naljian, who also set the atmosphere for the topic of the seminar, “A Young Christian’s Devotion to Cleanse from Sin and Lead a Life in Christ’s Path”. Members participated with the reading of scriptures, discussions, and a question-and answer session with Fr. Barthev.

The event was highlighted with the visit of the Prelate, who was accompanied by Rev. Fr. Vazken Atmajian, pastor of St. Mary’s Church in Glendale. The Prelate conveyed his blessings and encouraged the youth and young adults alike to grow spiritually and become more involved in various church activities in the years to come. The Prelate later toured the campgrounds with fellow members, joined members in various discussions, blessed the luncheon, and participated in the afternoon lunch with the attendees.

Upon the Prelate’s departure, the seminar continued with Fr. Barthev’s presentation on the Christian young adult’s commitment to daily prayer and a God-pleasing lifestyle.

The nighttime portion of the event included a special service for prayer requests. The agenda item provided the young adults with an opportunity to request prayers for self- betterment, health, career, work, and loved ones.

The night concluded with a showing of a Biblical film and a late-night bonfire where everyone joined in singing hymns, reading prayers and psalms, and giving personal testimonials.

The third and final day of the spiritual retreat began with another morning hike. Upon their return, the youth enjoyed a morning service conducted by Fr. Barthev and deacons. Prior to the conclusion of the retreat, the members relayed to each other their weekend experience and knowledge gained.

The retreat greatly and positively impacted the spirits of all those in attendance and the members returned on Sunday afternoon with enlightened minds and their hearts touched.

A Participant